ԿՈՆՑԵՌՆ ԴԻԱԼՈԳ փաստաբանական գրասենյակի քրեական իրավունքի թիմում՝ որպես իրավաբան և ավագ իրավաբան աշխատելու համար փնտրում ենք (առաջարկում ենք աշխատանք) փաստաբանների:

Դիմեք աշխատանքի համար, եթե Դուք

- կիսում եք մեր մոտեցումը, որ ժամանակակից հասարակության զարգացումը հիմնված է օրենքի գերակայության և **մարդու իրավունքների հավասար պաշտպանության վրա,**
- իրապես **ունեք համոզմունք,** որ **դատավարությունը և դատավարական երաշխիքները** մարդու իրավունքների իրական պաշտպանության ամենակարևոր կառուցակարգերից են և, թերևս, այն էական գործիքներից են, որոնք յուրաքանչյուր անհատի պաշտպանում են պետության կամ մեծամասնության կողմից հնարավոր չարաշահումից,
- եթե ունեք խորքային պատկերացում և գիտելիքներ **հիմնարար իրավունքների էության, հատկապես՝ արդար դատաքննության իրավունքի և անմեղության կանխավարկածի վերաբերյալ՝ ներառյալ դրանց իրականացման ձևերը,**
- ցանկանում եք ներգրավվել երբեմն բարդ, մեծածավալ, բայց նաև հետաքրքիր և հաճախ իրավունքի տարբեր ճյուղերի հատման կետում գտնվող և ինքնազարգացում ապահովող փաստաբանական աշխատանքներում:

Աշխատանքի նկարագիրը

- Մասնակցություն քրեական վարույթներին դատավարության բոլոր փուլերում, քրեական գործերով պաշտպանության իրականացում: Կախված գործի ծավալից և բարդությունից՝ փաստաբանը կարող է մաս կազմել ավելի մեծ թիմի կամ լինել գործը վարող հիմնական փաստաբանը,
- Բանավոր իրավաբանական խորհրդատվությունների տրամադրում, Հայաստանի քրեական և քրեական դատավարության (և հարակից այլ ոլորտների) օրենսդրության և պրակտիկայի վերաբերյալ գրավոր խորհրդատվությունների, հուշագրերի և իրավական կարծիքների պատրաստում,
- Քրեական դատավարության ընթացքում տուժողների իրավունքների պաշտպանություն, բողոքների պատրաստում, միջնորդությունների ներկայացում, որոշումների բողոքարկում և մասնակցություն նիստերին և լսումներին,
- Մասնակցություն հետազոտական և գիտական աշխատանքների իրականացմանը, իրավակիրառ պրակտիկայի հետազոտություններին, գիտապրակտիկ հրապարակումների, հարցուպատասխանի ձևաչափով հրապարակումների և հոդվածների պատրաստմանը:
- Ներգրավում Ընկերության կրթական և մարքեթինգային գործունեությանը, համապատասխան իրավական թեմաներով գրավոր (թերթեր) կամ տեսագրվող հարցազրույցների տրամադրում, քրեական օրենսդրության հետ կապված բլոգային գրառումների մշակում, շնորհանդեսների, կլոր սեղանների և սեմինարների կազմակերպում կամ մասնակցություն:
- Սահմանադրական դատարան տրվող դիմումների, ՄԻԵԴ-ի և Մարդու իրավունքների միջազգային այլ մարմինների գանգատների մշակում կամ օժանդակություն համապատասխան մասնագիտացված թիմերին ըստ անհրաժեշտության:
- Հանձնարարված այլ պարտականությունների կատարում, ներառյալ տարբեր իրավական հարցերի վերաբերյալ հետազոտությունների իրականացում:

Անհրաժեշտ որակավորում

- **Իրավագիտության բակալավրի** (կամ դիպլոմավորված մասնագետի) որակավորում,
- **Փաստաբանի արտոնագիր** (բացառիկ դեպքերում մենք կարող են դիտարկել Փաստաբանական ակադեմիայում սովորող թեկնածուներին, որոնք ավարտում են վերապատրաստումը և ակնկալվում է, որ արտոնագիր կստանան մոտակա վեց ամսվա ընթացքում),
- **համեմատական քրեական իրավունքի**, քրեական դատավարության իրավունքի, միջազգային իրավունքի և համապատասխան օտարերկրյա իրավական հայեցակարգերի և մոտեցումների իմացությունն առավելություն է (բայց ոչ նախապայման),
- Սահմանադրական իրավունքի սկզբունքների և մարդու իրավունքների միջազգային գործիքների ու պրակտիկայի իմացություն (առավելապես շեշտադրումով քրեական դատավարության և քրեական իրավունքին առնչվող մասով),
- Համակարգչային գերազանց իմացություն, MS Office (կամ համարժեք) փաթեթի իմացություն, touch typing (տաս մատով տեքստ հավաքելու) հմտությունը հավելյալ դրական կդիտարկվի, բայց պարտադիր չի,
- Կրիմինալիստիկայի և դրա սկզբունքների ընդհանուր իմացությունն առավելություն է դիտարկվելու,
- Հայերենի գերազանց իմացություն,
- Օտար լեզուների իմացություն (անգլերենը կամ ռուսերենը պարտադիր պայման է, ֆրանսերեն, գերմաներեն, իտալերեն, պարսկերեն, արաբերեն և այլ լեզուների իմացությունը առավելություն է, բայց ոչ նախապայման):
- Բանավոր և գրավոր հաղորդակցման գերազանց հմտություններ,
- Պատասխանատվության բարձր զգացում, ներքին կարգապահություն և ճնշման տակ և սեղմ ժամկետներում աշխատելու կարողություն, ինքնատիրապետում և հանրային ճնշմանն ու քննադատությանը դիմակայելու կարողություն, սեփական անձը պաշտպանյալների հետ չնույնացնելու ունակություն:
- Թիմային աշխատանքի և ժամանակի կառավարման հմտություններ և աշխատանքի բարձր արդյունավետություն:

Աշխատավարձ

Հաստիքների համար չկա հաստատված բյուջե կամ հաստիքային դրույքաչափի սահմանափակում: Աշխատավարձը կարող է տարբեր լինել՝ կախված մասնակիցների ստանձնած պարտականություններից և ունակություններից (մենք փնտրում ենք թիմի մի քանի նոր անդամների, և կախված ավագությունից աշխատավարձի զգալի տարբերություն կարող է լինել:

Մեր ոչ ֆորմալ և սահմանափակ հետազոտությունը ցույց է տալիս, որ Կոնցեռն Դիալոգ փաստաբանական գրասենյակում աշխատավարձը ժամանակի կոնկրետ պահին շուկայում առկա միջինից բարձր է: Աշխատավարձը որոշվում է թեկնածուի կողմից հարցազրույցի փուլում մատնանշած գումարի հիման վրա (ընտրված թեկնածուներին առաջարկվում է աշխատանք նրանց կողմից մատնանշված աշխատավարձով):

Դիմումներն անհրաժեշտ է ուղարկել ani.vardanyan@dialog.am և career@dialog.am էլհասցեներով մինչև 2023 թվականի հունվարի 20-ը:

Կոնցեռն Դիալոգ փաստաբանական գրասենյակի մասին

Կոնցեռն Դիալոգ փաստաբանական գրասենյակի պատմությունն սկսվում է 1998թ-ից: Գրասենյակն իր շուրջ 70 պրոֆեսիոնալների թիմով ծառայություններ է մատուցում իրավաբանության բոլոր ոլորտներում: Միաժամանակ, գրասենյակի առավել մասնագիտացած ոլորտներից է քրեական իրավունքը:

Դատավարությունների ժամանակ Կոնցեռն Դիալոգ փաստաբանական գրասենյակի թիմի կողմից կիրառվող գիտապրակտիկ ու նորարարական մոտեցումները, հատկապես արբիտրաժին ու քրեական ոլորտին վերաբերող անդրսահմանային գործերով, դարձել են ընկերության տարբերակիչ այցեքարտը:

#MayTheForceBewithYou